ՀՈՐԱՆՋԵԼԸ

Հորանջելիս բերանը խաչակնքում էին, որ դև կամ սատանա ներս չթափանցի։

ՓՈՇՏԱԼԸ

Մեկն եթե պատմեր և մի ուրիշը փոշտար՝ կողքիններն ասում էին՝ «խե՛ր էղնի», իսկ խոսողն այդ բարի նշան էր համարում, ուստի ասում էր. «Մեղավորն ասաց, արդարը վկեց (վկայեց)»։ Փոշտալ համարում էին նաև համբերության ազդարար ձայն, այսինքն՝ մի՛ շտապիր...

ՈՏՔԻ ՔՈՐԸ

Ոտքի քորը ճամփա գնալու նշան էր համարվում։

ԱԼՅՈՒՐ ԵՎ ԽՄՈՐ

Ալյուրը մի տեղից մյուսը փոխադրելիս, կամ խմորի գոնդը շինելիս՝ եթե մի քիչ ալյուր՝ ալրից և մի քիչ խմոր՝ խմորի զանգվածից թռչեր ընկներ մի կողմ, հավատում էին, որ հյուր է գալու։

ՄԱՂ ԵՎ ԿՐԱԿ

Հարևանը հարևանին երեկոները մաղ և կրակ չէր տալիս, տան արդյունքը հետը կգնար։

ՀՅՈՒՐ ԵՎ ՃՐԱԴ

Հյուրը մի տնից մեկնելու ժամանակ պետք է աղջիկներից մեկը կամ նորահարսը դուռը բաց աներ. եթե մեկնելու ժամանակ նրագ պիտի վառեին, չէին վառում և դուռը բաց չէին անում։

ՓՈՒՆՋ ՄԱԶ

Անասունը ծախելիս՝ մի փունջ մազ են քաշում, որ տան բարաքթը տանը մնա, հետը չտանի։

ՓՈԽԱԼՅՈՒՐ

Հարևանին ամանով փոխալյուր տալիս՝ ծայրից մի քիչ վերցնում, սուֆրայի մեջ են գցում, որ ալյուրի բարաքթը տանը մնա։

ՄՈՒՇ-ԲՈՒԼԱՆԸԽԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿՐՃԱՏՅԱԼ ՁԵՎԵՐՈՎ

Ա

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

Աբրահամ—*Աբրո, Աբրե, Աբրիկ*
Ադամ—*Աղո, Ադե*
Ազիզ—*Աղո*
Ալեքսանդր—*Ալեքսան, Սանդրո, Սանտրիկ*
Աղաջան—*Աղշո*
Անդրանիկ—*Անդրս, Անդրիկ*
Անդրեաս—*Անդրաս, Անդրո, Անդրե, Անդրիկ*
Առաքել—*Ըռքո, Ըռքե*
Ասլան—*Ասլո*
Աստվածատուր—*Ասատուր, Ասվատուր, Ասո, Ասե, Աստուր*
Ավետիս—*Ավո, Ավիկ, Ավե, Ավտո, Ավեսար*
Արիստակես—*Արիս, Արիստ, Ռստիկ*
Արմենակ—*Արմո*
Արշակ—*Արշո*
Արտաշես—*Արտաշ*
Արտավազդ—*Արտավազ, Արաո, Արտիկ*
Բաղդասար—*Բղդո, Բղդե, Բգո, Բազե*
Բարուճակ—*Բաբո, Բարե*
Բարսեղ—*Բրսո, Բրսե, Բրսիկ*
Բենիամին—*Բենո, Բենիկ*
Գաբրիել—*Գաբրել, Գպո, Գպե, Գաբիկ*
Գալուստ—*Գալո, Գալե*
Գասպար—*Գապար, Գասո, Գսպո, Գսպե, Գպե*
Գարեգին—*Գարե, Գարիկ*
Գեվորգ—*Գեվո, Գեվքե, Գվե, Գորգիզ*
Գրիգոր—*Գիրգոր, Գրգե, Գրգո, Գրո, Գրե, Գրիկ*
Դանիել—*Դանել, Դանո, Դնո*
Դավիթ—*Դավո, Դվո, Դավե, Դվե*
Դարման—*Դրմո, Դրմե*
Եղիազար—*Եղազար, Եզո, Եղան, Եղե, Եղիկ*
Եղիշե—*Եղիշ, Էղիշ*
Երանոս—*Երո, Էրո*
Զաքար—*Զտքո, Զքե, Զքո*
Զորայր—*Զորո, Զորիկ*
Թադեոս—*Թաթոս, Թադե*
Թեոդորոս—*Թորոս, Թոքո*
Թովմաս—*Թումաս, Թումո, Թումե, Թըմե*
Թորոս—*Թորե, Թորո*

Իսրայել—*Իսրո, Իսո*
Լեվոն—*Լավո, Լեվո*
Խալաթ—*Խալո, Խլե*
Խաչատուր—*Խաչիկ, Խչո, Խչե, Խչիկ*
Խոսրով—*Խոսրո, Խոսրիկ*
Խուրշիտ—*Խուրշուտ, Խուշո*
Կարապետ—*Կրպո, Կրպե, Կրպիկ*
Կիրակոս—*Կիկո, Կիկե*
Կոստանդին—*Կոստան, Կոստո*
Հազար (ապետ)—*Հաղրո, Աղրո*
Համազասպ—*Համո, Համզե*
Հայրապետ—*Հայրո, Հերո*
Հլղաթ—*Հլո, Հլե, Խլո*
Համայակ—*Համո, Համիկ*
Ղազար—*Խզրո, Խդրո, Խազարիկ*
Ղուկաս—*Ղուկո, Ղուկե (Խուկե)*
Մամիկոն—*Մամիկ, Մամո*
Մանուկ—*Մնո, Մնե, Մնուճ*
Մատթեոս—*Մաթոս, Մաթե, Մաթո*
Մարզար—*Մարդարա, Մարգարե*
Մարտիրոս—*Մարտո, Մարտե, Մրտո*
Մախսուդ—*Մախսո*
Մեսրոպ—*Մեսրո, Մեսրիկ*
Մելիք—*Մելո*
Մելքոն—*Մլքիկ, Մլքե*
Միհրան—*Միրան, Միրո*
Միսակ—*Միսո, Մուսակ*
Միքայել—*Մուքաել, Մուքո, Մքե*
Մխիթար—*Մխո, Մխե, Մխիկ, Մխթո*
Մկրտիչ—*Մկրո, Մկրե, Մկուճ*
Մհեր—*Մեհրե, Մեհրո*
Մնացական—*Մնաց*
Մովսես—*Մոսո, Մոսե, Մոսիկ*
Մուշեղ—*Մուշո*
Մուրադ—*Մուրտե, Մուրաո, Մուրե, Մուրո*
Ցաբեթ—*Աբեթ*
Յակոբ—*Ցակո, Ցակե*
Ցարություն—*Ցարթեն, Ցարութ, Ցարե, Ցարո*
Յոհաննես—*Ցովան, Ցովո, Ցոհան, Ցոհնո, Ցոխիկ, Ցոխե*
Յովսեփ—*Ցովսե, Ցովսո, Ցովսիկ, Ուսո*
Ցունան—*Ցունո*
Ցուսիկ—*Ուսիկ*
Նադիր—*Նադե, Նադո*
Նազար—*Նզրո, Նզրե*
Նահապետ—*Նհապետ, Նհո, Նախո*
Ներսես—*Ներսո, Ներսե, Ներսիկ*
Նիկողայոս—*Նիկողոս, Նիկո*
Շահեն—*Շահո, Շհո*
Շապուհ—*Շաբո*
Շավարշ—*Շավո, Շավեշ*
Շմավոն—*Շմավ, Շմո*
Ումրշատ—*Ումրիկ, Ումրի, Ումրո*
Պապ—*Պապո, Պապե, Պապիկ*
Պարույր—*Պարո, Պարիկ*
Պետրոս—*Պետո, Պետե, Պեսիկ, Պիտուն*
Պողոս—*Պողոս, Պողսե, Պողսիկ, Պողո*
Ռաշիդ—*Ռաշո*
Սահակ—*Սհակ, Սհո*
Սաղաթիել—*Սաղաթել, Սաղե, Սաղո*
Սամուել—*Սամել, Սամո*
Սամսոն—*Սմո, Սման*
Սահասար—*Սանո*
Սարգիս—*Սագո, Սրքո, Սրքե, Սասին*
Սարուխան—*Սաբո*
Սեդրակ—*Սեդո, Սեդրո*
Սենեքերիմ—*Սենո, Սենիկ*
Սերովբե—*Սերոբ*
Սիմեոն—*Սիմո, Սիմե, Սմո, Սիմիկ*
Սմբատ—*Սմբո, Սման*
Սողոմոն—*Սողո, Սողե, Սողիկ*
Ստեփան—*Սեփան, Սեփե, Սեփս*
Վահան—*Վանո, Վանիկ*
Վարդան—*Վրդո, Վրդե, Վրդիկ, Վթին*
Վիգեն—*Վերգո*
Տիգրան—*Տիգո*
Տիրան—*Տիրո*
Տոնապետ—*Տոնո, Տոնե*
Տրդատ—*Ծրդատ*
Փիլիպոս—*Փիլոս, Փիլո*
Քերովբե—*Քերոբ*
Քոչար—*Քոչո, Քոչե*

Բ

ԿԱՆԱՆՑ

Ազիզ—*Ազե*
Ազնիվ—*Ազնո*
Ալմաստ—*Ալմե, Ալմո*
Աղավնի—*Աղութ, Էղվընեկ*
Աղրութ—*Աղութ*
Անգին—*Անկո*
Աննա—*Անա, Անո, Աննո*
Անթառամ—*Անթառան*
Ասմար—*Ասմո*
Արեգնազան—*Արեգ*
Բեզար—*Բեզիկ, Բեզո*
Բերսաբե—*Բերսո, Բերսիկ*
Գյուլիզար—*Գուլե, Գուլի, Գուլո*
Գոզալ—*Գոզե*

Գոնար—*Գուհար, Գովար, Ջուհար*
Դիլբար—*Դիլբո*
Դշխունի—*Դշխուն*
Եղիսաբեթ—*Եղսո, Եղսիկ*
Եղնիկ—*Եղնո*
Եվա—*Եվո*
Ջանազան—*Ջանո, Ջանե*
Ջառնիշան—*Ջեռե*
Ջարունի—*Ջարե*
Ջուլֆի—*Ջլֆո, Ջլֆիկ*
Ջմրուխտ—*Ջմրութ, Ջմո*
Ջոզան—*Ջոզո, Ջուզե*
Ջուլալ—*Ջուլո*
Թազագյուլ—*Թղո*
Լուսնթագ—*Լուսիկ, Լուսո*
Խանըմ—*Խանե*
Խումար—*Խիմո*
Մաղիկ—*Մաղե, Մաղկիկ*
Կաֆավ—*Կաքվիկ, Կաքվո*
Համասփյուռ—*Համաս*
Հայկունի—*Հայկո, Այգուն*
Հերիֆնազ—*Հերքո, Հերիք*
Հուրի—*Հրիկ, Հուրո*
Հուրնիկ—*Հուրնեկ, Հուրո*
Հռիփսիմե—*Հռոմ, Հռոմիկ*
Ղազալ—*Խաղո, Խղո*
Ղուտրաթ—*Խուդո*
Մանի—*Մայի*
Մանուշակ—*Մանուշ, Մնուշ*
Մարիամ—*Մայրամ, Մեյրե, Մեյրո*
Մաֆրունի—*Մաքե, Մաքո*
Մերդին—*Մերդո*
Յուղաբեր—*Օղիկ*
Նազիկ—*Նազե, Նազո*
Նախշուն—*Նրխշուն, Նրշխուն*
Նանո—*Նանե, Նանիկ, Նանաճ*
Նարզիզ—*Նրգե, Նրգո, Նրե*
Նիզար—*Նկար*
Նոյեմզար—*Նեմզար*
Նուբար—*Նուրո*
Նունո—*Նանիկ, Նունիկ, Նունուշ*
Նուշիկ—*Նուշ, Նուշո*
Նվարդ—*Նվե*
Շամամ—*Շամո*
Շամիրամ—*Շամրիկ*
Շարան—*Շարո*
Շուշան—*Շուշո, Շուշիկ*
Ոսկեհատ—*Օսկո*
Զիշակ—*Զիշո, Զիշե*
Զինար—*Զինո*
Պայծառ—*Պոծառ*
Ջանթաս—*Ջանֆաս*
Ջանջան—*Ջանիկ, Ջանո*
Ջեյրան—*Ջեյրո*
Սալվի—*Սալվար, Սլվիկ, Սլվո*
Սանդուխտ—*Սանդուխ*
Սոսի—*Սոսե*
Սրբուհի—*Սրրուն*
Վարդուհի—*Վարդո, Վարդիկ*
Վառվառե—*Վառվառ*
Վարսենիկ—*Վարսե, Վարսս*
Տիրուհի—*Տիրուն*
Փամփուխ—*Փամփո*
Փառանձեմ—*Փառանձ, Փառիկ*
Փարիշտան—*Փարո*
Քիշմիշ—*Քիշո*
Ֆաոֆուռ—*Ֆաղֆուր*
Ֆընդըխ—*Ֆնդե*
Ֆիդան—*Ֆիդո*
Ֆինջան—*Ֆինջո*

ՐՈՒԼԱՆԸԽՑՈՒ ՄԱՆԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Ա՞խ-ֆ՞ըխ—*կեղտոտ է, ղղվելի է*
Բժո—*ճրագ*
Գզո—*ատամ*
Զիզի—*խաղալիք*
Թաթո—*թաթիկ, ձեռք*
Կակա—*միրգ*
Կոժո—*գոմեշ*
Կուշո—*գլուխ*
Կուշու—*շուն*
Հոռո—*գառ*
Ճիճի—*պսպղուն սուտակա*
Ճուճու—*հավ*
Մնի՛—*կանգնի՛ր*
Ջաշո—*աչք*
Պանի՛—*պառկի՛ր*
Պուպու—*ջուր*
Պսո—*միս*
Տիտի՛—*նստի՛ր*
Տխե՛—*դա՛րկ*
Տոռո—*ոտք*
Փապա—*հայր*
Քրո—*քիթ*
Ֆուֆու—*կաթ, խմելիք*